



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՆՈՐ ՍԻՍՏԵՄԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐԵՊԱՆ - 1929

16869


ՊԱՏԱՆԻ ՊԻՈՒԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ՀՀԿ 1011

ՊԵՍՆԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՍԻՍՏԵՄԸ

A 38984

—



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1929

ԹԵՏՐԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեսպ. № 1642 թ

Պատվ. № 221

Հթ. № 912

Տիրամ. 3000

ԱՐԱՉԱԲԱՆ

Այս գիրքն իրենից ներկայացնում է պիտներական կազմակերպության աշխատանքի նոր սիստեմի շարադրությունը, վոր առաջարկվում է ՀամլեթեՄ կե Պ. Պ. Է. կողմից և վորը վերամշակված է Անդրկովկասի ազգային հանրապետությունների պայմանների համեմատ:

Կենցաղային մեացորդները, նացիսնալիզմը, յուրահատուկ անտեսական պայմանները (յալազներ, դժազներ, բամբակագործություն, շերամազահություն և այլն) պահանջում են պիտներական կազմակերպության աշխատանքի բովանդակության մեջ վորոշ փոփոխություններ մտցնել: Սակայն Անդրկովկասի հանրապետությունների առանձնահատկություններն այնքան բազմազան են, վոր առաջարկվող նյութը չի կարող ընդգրկել յուրաքանչյուր կազմակերպության կոլեկտիվների ամբողջ հասարակական-ոգտակար և դաստիարակչական աշխատանքը:

Յուրաքանչյուր զայխուային կազմակերպության յեվ նրա դեկալար կազմի խնդիրն ե' կառուցել իրենց ամբողջ աշխատանքն այնպես, վորպեսզի հաղթահարվի անող սերնդի մեջ նին կենցաղային տրադիցիաների ազդեցությունը, յեվ ստուծվի նոր սոցիալիստական հասարակության ժինարարության դարսցանին արժանի նոր մարդը:

Առաջարկվող աշխատանքի սիստեմը տարբերվում է կոլեկտիվների նախորդ ամբողջ աշխատանքից վոչ միայն նրանով, վոր տալիս ե առանձին հասակներին համապատասխան սահմանված առաջադրություններ և ապահովում է յերեխայի աստիճանական աճումը կոլեկտիվում, այս նրանով, վոր նաև նենվում ե նենց յերեխաների ինքնազործությունը վրա: Այդ պետք ե ապահովի պատահեկության մաքսիմալ ինքնա-

դործունելությունը և նրանց հետաքրքրվելն ամբողջ աշխատանքով:

ՀամլէթեՄ Անդրյերկոմի Պիոներական Բյուրոն համոզված է, վոր նոր սիստեմի անցկացումը կհանդիսանա չոր, միառինակ աշխատանքի արժատական փոփոխության սկիզբը և կըսարձրացնի աճող սերնդի դաստիարակության վրակը:

ՀամլէթեՄ Օ. Եղրիւերկոսին կից՝ Պատաճի Պիոներների Օ. Եղրկովկասյան Բյուրո

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պիոներական աշխատանքի նոր սիստեմին վերաբերող նյութերը հրատարակվում են Պատաճի Պիոներների Հայաստանի Կենտրոնական Բյուրոյի պլենումի կատարած վորոշ փոփոխություններով և լրացումներով:

ՀԱՅԹԵՄ և կից ՊՊ և Բյուրո

Մ Ա Ս Ն Ի

Գ Լ Ո Ւ Խ Ի

ԴԵՐԻ ՆՈՐ ՍԻՍՏԵՄ

Համեմիջեմ 8-րդ համագումարը լերեխաների մեջ տարվող աշխատանքի վերաբերյալ ընդունած բանաձևում ընդգծել է հետեւալը.

«Համեմիջեմ 7-րդ և 8-րդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում պիոներական շարժումն ապրում եր խոշոր դժվարություններ, վորոնք ներկայումս ել դեռ չեն վերացել վորը նույնիսկ պիոներական կազմակերպության մեջ լեղած լերեխաների քանակի կրճատումը բերեց։ Այդ դժվարությունների պատճառները գլխավորապես կայանում են խորհրդավիճ լերկրի յերրորդ սերնդի՝ մեր աշխատել չիմանալուց, լերեխաների մեջ տարվող մասսայական կոմմունիստական աշխատանքի բավականաշափ մտածված սիստեմի և մանկավարժորեն հիմնավորված մեթոդների բացակայության և մեծերի մեջ տարվող աշխատանքի մեթոդները մեքենայորեն մանկական միջավայրը փոխադրելու մեջ։ Այդ հաճախ պիոներական աշխատանքը հասցնում է չափից ավելի «պոլիտիկացիայի»—ի վնաս հասարակական-աշխատանքային դաստիարակության, կուլտուր-լուսավորչական գործունեության և յերեխաների առողջ ժամանցի կազմակերպման։ Միաժամանակ, յեթե մի կողմից մենք ունենք թերում մանկական շարժման «պոլիտիկացիայի» կողմը, մյուս կողմից, վորպես ռեակցիա դեպի պիոներների մեջ տարվող աշխատանքի թերություններն ու դժվարությունները, նկատվել են առանձին տեսակենցներ, վորոնք ամբողջովին ժխտում են լերեխաների հասարակական-քաղաքական դաստիարակությունը։ Թե այն և թե այս թերությունները պետք են վճռականապես վերացնել։

Մենք պետք են հաստատ և հետևողական կերպով մանկական շարժման աշխատացման իրագործման կուրսը վերցնենք, պիոներական աշխատանքի հիմքը ընդունելով հասարակական աշխատանքին դաստիարակությունը։ Վարդի նիման վրա յե միայն հնարա-

զոր կառուցել յերեխանների դասիարակությունը կողիելտիպմի չեն կոմմունիզմի փազով: Նոր ձևերն ու մերսոնները, վորոնի մշակվում են աշխատանի պրոցեսում յիշ վորոնի արդեն գՏել են իրենց գործնական կիրառություն մի օպտ սլիմետրական կազմակերպություններում պետք ե ամուր կերպով մանեն պիոներական կազմակերպության վողջ կլանքի մեջ:

Ամբողջ արդ աշխատանքը պետք է կառուցել այնպես, վոր նա համախմբեր լերեխաններին և մեծացներ նրանցից մարդկանց, վորոնք չեն պատկերացնում իրենց կրանքը կոլլեկտիվից դուրս, այլ զգում են իրենց անքակտելի կապերով կապված կոլլեկտիվի հետ: Մշակապես զարգացող դիսակից վերաբերմունքը դեպի շըրջապատը կը լեկտիվ աշխատանքը այդ շրջապատը փոխելու և բարելավելու համար, ել ավելի պիտի համախմբի լերեխաններին, դաստիարակել նրանց մեջ կարողություն միահամուռ կերպով հասարակական նպատակներ առաջադրել և միահամուռ կերպով նրանց հասնել:

Առաջադրված հասարակական-գործնական խնդիրների իրագործումը յերեխանների կողմից կդաստիարակի նրանց մեջ աշխատանք կազմակերպությունը աշխատանքը ընթացքում փոխադարձ ընկերական ոգնություն ցուց տալու սովորությունն, կարողություն՝ ուղղելու սեփական գիտելիքները և ընդունակությունները ամրողին սպասարկելու համար և զրանում գտնել բավարարություն:

Վոչ միայն պիոներական կազմակերպության մեջ, այլև տանը, դպրոցում և փողոցում, պիոները պետք է լինի լերեխանների պաշտպանը ծեծից, կոպիտ վերաբերմունքից, շահագործումից, նա պետք է հատկապես ուշադիր լինի դեպի շքավորության լերեխանները, դեպի անապաստանները և պիտի աշխատի նրանց զրափել պիոներական կազմակերպության մեջ, չենց այս կողմից և պետք և մատենալ, բացատրելով պիոներներին դասակարգային հակառակությունները, բանվոր դասակարգի պայքարը, կը ընի դեպ, բանվորական շարժման միջազգային բնույթը և այլն:

Հարկավոր է, վորակեսզի պիոներները հասկանալին կուսակցության, կոմիտեի տմբության, խորհրդակին իշխանության նշանակությունը, արհմիութենական, կոռպերատիվ և կանանց կազմակերպությունների նշանակությունը, վորակեսզի նրանց իրենց ուժերը ներածին չափ լինեն ոգնականները այդ կազմակերպությունների:

Դրա հիման վրա անհրաժեշտ է արագացնել հասարակա-

կան գործերի, լիրելսաներին հետաքրքրող ու համապատասխան գործերի որինակելի ցանկի և նրանց հետ շաղկապված համապատասխան ունակությունների և զիտելիքների ցանկի վորոշումը։ Գործերի, ունակությունների և զիտելիքների այդ ցանկն աստիճանական (աստիճանաբար բարդացող) բնույթ պիտի ունենա, վորը հարմարեցված և հասակալին կազմին և քաղաքի և գլուղի պայմաններին»..

Այս գրքույկում տպագրված նյութերը ներկայացնում են իրենցից առաջին փորձը 8-րդ համագումարի վորոշումը պիտուներական աշխատանքի սիստեմի վերաբերյալ իրագործելու հարցում։

Այստեղ առաջարկվող աշխատանքի սիստեմը նոր և նրանով, վոր առաջին անգամը փորձ և արվում բնինանրացներու պիտիներկազմակերպության տմբողջ վեց առավագ փորձ։ Այդ փորձը սիստեմի յև վերածվում դեն չպրաելով այն բոլորը, ինչ վոր անպետք ե, այդ վորձը լրացնելով ողափակար գործերով, այդ բոլոր գործերը հարմարեցնելով պիտուներկազմակենալության մեջ լինում առանձին հասակի խավերին։ Նոր սիստեմը պիտիներական կոլլեկտիվ, որպիսի յուրաքանչյուր պիտիների յևի կոլլետիվ սպառազինում և կոնկրետ խնդիրներով, վորոնք իրագործելով պիտուներին իրենցից կապարաստեն բանվորական գործի իսկական շինարարության և մարտիկներ։

Մատչելի դարձնելով յուրաքանչյուր պիտիների հասկացողությանը նրա ամենորյա աշխատանքի խնդիրները, «նոր սիստեմը հենց գրանով մեծապես նպաստում է մեզ համար գժվարագույն խնդրի լուծմանը, այն եւ պիտուների իննազարծանելյարյանը, վորպեսզի ամեն աեղ լուրաքանչյուր կոլլեկտիվ հանգիստանա խսկական փոքրիկ ինքնազործունյա պատանիկական կոմմունիստական բջիջ, ուր իրենց յերեխաները կոլլեկտիվ կերպով կառուցում են իրենց աշխատանքը, իրենք ակտիվ կերպով գործում են։ Յեթե պիտուներին պարզ և հասկանալի լինեն ընդհանուր նպատակները, յեթե նրանց առաջ գրպին փոքրը, բայց միանգամայն պարզ խնդիրներ ամենորյա գործունեցության համար, ապա հենց այդ միայն նշանակալի չափով կզարդացնի պիտուների ինքնազործունելությունը և նրանց կազմատի կոլլեկտիվ ամենորյա խընամակալությունից աշխատանքը ընտրելու գործում։

Ահա այս մոմենտաներն են բնորոշում այսպիս կոչված նոր սիստեմը։

Ընկերներից շատերը կարծել են և դեռ այժմ ել կարծում են, վոր նոր սիստեմը վերանայում ե վահայն կուտակված ամբողջ փորձը, կոլլեկտիվի և ողակի աշխատանքի ձևերն ու մեթոդները, այլ և յերեխաների կոմմունիստական կազմակերպության սկզբունքներն ու նպատակները։ Այդ ձիշտ չե։ Աշխատանքի մեթոդներն ու սիստեմը

մենք դեռևս շատ անգամներ կվերանայինք, իսկ յերեխաների կոմմունիստական կազմակերպության նպատակներն ու սկզբունքները զեռյերկար կմնան իրրե հիմնական ղեկավարություն, վոր ուղղություն և տալիս լուրաքանչչուր ողակի, ամեն մի պիտոների առորդա դորձունելությանը:

Այդ նովատակները շատ լավ արտահայտված են պիտոներիների ուրենքների և սովորությունների մեջ. Այս ամենը, ինչ վոր ավյալ զըրքուցի մեջ շարադրված է, միայն մի հատիկ նպատակ և հետապնդում՝ պիտոներկազմակերպության զարգացման տվյալ ետապի վրա՝ կորդարին, ողակավարին և իրենց պիտոներներին ցուց տալ, խորհուրդ տար թե ինչպես պետք և աշխատանքը լավ կազմակերպել, վորպեսզի պիտոներն վորքան կարելի է հաջող կերպով կատարեն որենքներն ու սովորությունները, թե ինչպես պետք և պիտոներն ամեն որ աշխատի, վորպեսզի արդարացնի պատանի պիտոների, պատանեկան կոմմունիստական կազմակերպության անդամի պատվավոր կոչումը:

ԳԼՈՒԽ II

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՆՈՐ ԶԵՎԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՆՅՈՒԹԸ

Սկզբում մենք խորհուրդներ ենք տալիս կորդարին և պիտոներին, թե ինչպես պետք և ափելի լավ կազմակերպել ողակների, ընդհանուր հավաքությունների, խմբակների աշխատանքը, ինչպես հաշվի առնել աշխատանքը, ինչպես կազմակերպել կոլեկտիվի ամբողջ գործունելությունը:

Նյութի յերկրորդ մասում դուք կգտնեք կոլեկտիվների և ողակների գործնական աշխատանքների ցանկը, վորը պարունակում է ինչպես հանրողութ գործեր, այնպես և կուլտուրական-մասսայական աշխատանք յերեխաների հանգիստը կազմակերպելու շուրջը, աշխատանքալին դաստիարակություն, նատուրալիստական աշխատանքը, պիտոներները զպրոցում, մարզանք և ուազմականացում և այլն: Այդ ցանկում բերած գործերը կարինետում չեն հնարած, այլ վերցված են պիտոներկազմակերպության ամենորյա կլասնքի և գործունելության առորյա փորձից: Զեզնից շատերն այդ ցանկը կարող են ընդունել պարագիր ծրագրի տեղ և կսկսեն բոլոր գործերն սկսած առաջինից և վերջացրած վերջինով մշակել: Դուք այսպիս անելով ամենակոպիտ սխալն արած կլինեք: Այդ ցանցը միայն նրա համար և տրվում, վորպեսզի կոլեկտիվ

Ներն ու պիոնիքները հեշտությամբ կարողանան ընտրել հետաքրքիր և ոգուակար գործեր:

Բացի հանրոգուտաշխատանքը, վորը վոչ մի կերպ չի կարելի սեղամենատացիայի լենթարկել ըստ հասակների, բոլոր մէուս զործերը բաշխված են թե կոլլարի վրա ամբողջությամբ և թէ կրտսեր (10—12 տ.), միջին (12—14 տ.) և ավագ (14—16 տ.) հասակի ողակների վրա: Բայց ինքնըստինքյան հաօկանալի յե, վոր այդպիսի բաշխումը միայն կողմնորոշող նշանակություն ունի, վոր, տեղական պայմաններին և պիտուներների պատրաստականության աստիճանին նայած, կարելի յե փոխել մեր կողմից նշված աշխատանքի բաժանումն ողակների վրա: Բացի այդ պետք և հաշվի առնել վոր մի շաբք գործեր պետք և կատարեն ասանձին ողակներ, բայց հոգուտամբողջ կոլլեկտիվի:

Ձեզ պետք և լավ հայտնի լինի, վոր պիոներական կոլլեկտիվի ողակի աշխատանքը տուժում և վոչ միայն հետաքրքիր, կենդանի դորձ գտնելու անկարողությունից, այլև նրանից, վոր պիոներները չգիտեն, թե իրենք ինչ պիտի սովորեն կազմակերպության մեջ լեղած ժամանակամիջոցում, ինչ պետք և իրենք իմանան և կարենան անել:

Ուստի գործնական աշխատանքների և գործերի ցանկից հետո մենք տալիս ենք այն ունակությունների և գիտելիքների որինակելի ծրագրերը, վոր պետք և ունենան կրտսեր, միջին և ավագ ողակների պիոներները:

Ունակությունների և գիտելիքների ալու որինակելի ծրագիրը պետք և ամեն մի ողակի համար չափանից ծառայի, թէ պիոներները զանազան տեսակի աշխատանքներ կատարելով, ձեռք բերել են արդյոք այն գործնական գիտելիքների և կարողությունների մինիմումը, վոր համապատասխանում և տվյալ հասակի (կրտսեր, միջին, ավագ) յերեխանների պահանջներին և վոր նպաստում և նրանցից ապագա կոմյերիտականներ պատրաստելուն:

Ունակությունների և գիտելիքների հետ միասին դուք գրքում կդանեք նաև միքանի վարպետությունների որինակներ, վորոնք նըսպատակ են դում զարգացնել աղաների հակումներն ու հետաքրքրությունը դեպի աշխատանքի այս կամ այն տեսակը:

Ցեղ վերջապես, ալու նյութի վերջում մենք տալիս ենք ձեզ ցուցմունքներ կոլլեկտիվի մեջ նոր ընդունվող յերեխաններին հանդիսավոր խոստման համար պատրաստելու մասին, տալիս ենք պահանջների այն որինակելի մինիմումը, վոր անհրաժեշտ և ներկայացնել յուրաքանչյուր պատանու, իր հասակի համեմատ, պիոներական շաբքերն անցնելիք:

Այս ամբողջ նյութը նկատի ունի թե քաղաքային և թե զյուղական կոլլեկտիվները: Լավ կլիներ, ինարկե, վորպեսզի ալու գրքույթի

առաջին և յերկրորդ մասերը հրատարակվելին առանձին քաղաքի և առանձին գյուղական պիտունների համար։ Սակայն համապատասխան հնարավորությունների բացակայությունն ստիպում է մեզ սահմանափակվել սրանով, բնդութեավ միայն քաղաքային և զբուղական առանձնահատուկ զորձերի մի շարք։

Գ Լ Ո Ւ Խ III

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ ԿՈԼՎԱՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՊԻՌՆԵՐԱԿՏԻՎԻՆ

Անզըկովկասյան կազմակերպություններում գործ թյուն ունեն աշխատանքի մի փոքր այլ պայմաններ։

Բաղմաթիվ ազգությունների գործոթյունը, սրա հետ կապված դեռ չոչնչացված ազգայնական թշնամությունը, հինգենցաղի մնացորդները, որինակական ծեսեր կատարելը, մեծ անզրազիտությունը, հակասանիտարական գրությունն ու հիմանգությունների տարածվածությունը մասնավոր գյուղերում և այլն, — այս բոլորը փոփում եւ մեր աշխատանքի բովանդակությունը Խորհրդադին իշխանության նորմանձությունները, կյանքի վերափոխությունը նոր ձևով կուլտուրական հետամնացության շնորհիվ մեծ դժվարությունների յեն հանգիստում, կուլակը, քահանան, սպեկուլանան ոգատագործում են անզրազիտությունը և անեւուտուրականությունն իրենց ոգտին։

Մյուս կողմից պատանին շուտ և ձեւակերպվում, և նրա դերը անտեսության մեջ սկիզբ նշանակալի լի։

Պիներական կազմակերպությունն պես և մեծ զործ կատարի ումեն մի տպայի յել աղօկա այնպես դասիարակի, վոր երանի դառնան նարկենցալը կոլլեկտիվիզմը տարածող, ինչպես թնամիկում այնպես յել բնանիմի ու զյուղի տնտեսության մեջ։

Կոլեկտիվը պետք է ոգնի պիտուններին փոքր հոսակից պարզելու ազգային թշնամության, կրօնամոլության, հին կենցաղային որհնքներին անխոս հնագանդվելու, փոքրանասակ բատրակներին շահագործելու միասը և պետք և սովորեցնի պայքարել այն բոլորի դեմ, ինչ վոր խաղարում և բանվորի, զյուղացու, ամեն մի պատանու կուլտուրական աճանը։

Մեր աշխատանքը պես և ներծծի իներենացիոնալիստական դասիարակությամբ, պայմանու քենաշական, վոչ բարեկամական վերաբերմանի դեմ դեպի աւրիս ազգի տպան, նախակրոնական աշխատանիում՝ պայմանու յերեխաների յել մեծանասութիւնի կրօնամոլության դեմ։

Իսկ այժմ անցնենք նրան, թե ինչպես պիտի աշխատի կոլեկտիվը, լուրաքանչությունը սպակ՝ նպաստ ին հաննելու հասար։

1. ԽՆՉԳԵՍ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԻ ԱԴԱԿԻ

Ա. Յիատանի քերություն ինք պլան կազմելը

Յուրաքանչյուր ամսի սկզբում ողակը հավաքվում և վորոշելութեա բնչ աշխատանք պիտի և կատարի լեկող ամիս:

Խնչից և բաղկացած ողակի աշխատանքը: Նախ և առաջ կոլեկտիվի այն առաջադրություններից, վոր ողակը կստանա խորհրդից իսկ յերկրորդ՝ ողակն ինքն իրեն համար կընարի հետաքրքիր գործեր այն գործերի թվից, վոր մենք այս գրքում հանձնարարում ենք, և յերրորդ՝ ողակը հանձն և առում կատարելու այն հետաքրքիր և ողակաբ գործերը, վոր իրենք յերեխաներն են առաջազրում, կամ տեղական պայմաններն են թելսպրում: Յեթե ողակը հավաքվելով աշխատանք մատանաշելու գժվար զրության մեջ կընկնի, չի կարողանա իր համար հետաքրքիր գործեր զանել, մենք հանձնարարում ենք այդ գելքում ողակի հավաքությամ կարգալ միքանի գործ նրանցից, վոր մենք այս գրքում ըերում ենք, զրանցով հետաքրքրելով իրենց տղաներն: Մի անգամ ևս հիշեցնում ենք չիերարերվել զործնական աշխատանքների ցանկին իրեն մի աեսակ պարտադիր ծրագրի: Ինքներդ կարողացիք և պիոններներին սովորեցրեք, վորպեսդի կոլեկտիվի ուժերի զործագրության ասալարեկ դանեն շրջապատող կյանքի միշտք հասարակականուրեն-ուղարկար զործերի մեջ:

Ողակների և կոլեկտիվի համար ար կամ այն զործն ընտրելիս պիտի և ընդունելի ի զեկագալություն հետեւալը.

ա) Կրտսեր ողակների համար լինելով գարենքը չպիտի յերկարագու լինեն, նրանք, իրեն կանոն, չպետք և դուրս գան ընտանիքի, տան, զործարանային հանրակացարանի և զօլոցի սահմաններից, այդ զործերի համար, իրեն կանոն, չպետք և պահանջվի կապվել իր ձեռնարկից, զյուղից զուրս զանվոր հիմնարկների և կաղմակերպությունների հետ:

բ) Միջին ողակների համար զործերն արգեն կարող են ընդգրեկել ըստ ժամանակի 1—2 ամիս, իսկ ըստ աշխատանքի տեղի կտրող են ընդգրեկել և իր փողոցը, մանկական հրապարակը, մանկական զբաղարանը, զործարանալին կամ զյուղական կուլտուրական կենտրոնաբարկները (ակումբ, բանվ. զբարարան, մանկապարտեզ, խըրակիթ-ընթերցարան և այլն): Մրա համեմատ այդ զործերը կարող են պահանջել կապ և ծանոթություն մասավորապես իր ուսունական քաղաքի, շրջանի մեջ զանվոր հիմնարկությունների և կաղմակերպությունների հետ:

գ) Ավագ ողակների համար զործերն արգեն կարող են ընդգրեկել ամբողջ պլանային ժամանակաշրջանը (2—3 ամիս, իսկ յերբեմն ամբողջ

ամառը, ամբողջ ձմեռը) և պարունակել քաղաքացին և նահանգական ոչշահակություն ունեցող հիմնարկներին և կազմակերպություններին ողոնող աշխատանք (մասնկական ակումբներ, կինո, թանգարան, դիսպաններ, հասարակական կազմակերպություններ, պետական մարմիններ):

Այս բոլորն, ինարկե, չպետք ե մեխանիկորեն կիրառել կարող են լինել գեղքեր, չերք ողակները հանձն կառնեն ավելի լայն կամ ավելի նեղ գործեր, նայած կյանքի պահանջներին, աղաների մտկարդարին, նրանց պատրաստությանը և այլն:

Դուք կհարցնեք, թե ինչպես վարդենք ունակությունների և զիտելիքների ծրագրի հետ, միթե այդ ծրագիրը միշտ ողակի աշխատանքի բարձրացուցիչ մասը չի կազմելու Որինակելի ծրագրում թված ունակություններն ու զիտելիքները կստացվեն պիոնների և ողակի կատարած ամբողջ աշխատանքի պրոցեսում: Յենթագրենք, թե ողակը պիտի պատրաստվի խորհուրդների վերընտրության կամպանիակի համար: Այս աշխատանքի պրոցեսում ողակը մի շարք ունակություններ ձեռք կը բերի նկարչության և կազմարարության ասպարիցում և ստիրգած կինի վերընտրական կամպանիայի պատճառով պարապել պլակատներ, լուսանկաներ, զիտելիքներ այն մասին, թե ինչպես և մեզանում հՍՀՄ-ում կառուցվում պետությունը, ով իրավունք ունի ընտրել և ընտրվել և այլն, ինչ հաջողություններ կան սոցիալիստական շինարարության ասպարիցում: Կամ յենթագրենք ողակն իրեն նպատակ է զնում նորոգել վորևե զպրոցական և ջոկատի ինվենտար, այդ ողտակար գործն անելով ողակի պիոններները ձեռք կը բերեն ատաղձագործի մի շարք ունակություններ:

Աղակներում հատկապես ունակությունների և զիտելիքների այդ ծրագիրը մշակել մենք չենք հանձնարարում, վորովհետեւ, ինչպես մենք վերն ասացինք այդ ծրագիրը պետք ե պիտունների համար չափանիշ հանդիսանա, թե ինչը նրան անհրաժեշտ և ողտակար կլիներ իմանալ և անել կարողանալ:

Հնարավորությունից դուրս չե, վոր պիոններները կցանկանան պարզապես սովորել ծրագրում ցուց տված վորևե գործ, որինակ, չենթադրենք, թեկուզ Մորգեյի այրուրենը սովորել: Այդ նրանց արգելել պետք չե, այլ, ընդհակառակը, պետք ե նրանց աջակցել, ողնելավելի հետաքրքրիր ձեռվ կազմակերպել նույնիսկ ալղակիսի, թվում ե թե, ձանձրալի գործ, ինչպիսին Մորգեյի այրուրենը սովորելն ե: Աղակավարը պետք ե հանձնարարի մի շարք հետաքրքիր կենդանի ձեռք, վարունց շնորհիվ պիոններները կարող են այդ այրուրենն ավելի արագ ուսումնասիրել, հենց թեկուզ՝ արագ ընդունել և հաղորդել լուսի, ձիսի, սուլիչի միջոցով ընդունել-հաղորդելը. ողակին հայտարարու-

թյուններ տալը Մորդեյի այլուրեհնով. կազմակերպելով ողակի յեւլույթ սիզնալիքացիայի կիրառմամբ հանդերձ և ալլու

Առանձնապիս պետք է խրախուսել պիտոնիների լերկույթերը հոգուց խմբեր կազմելու և այս կամ այն գործը, ունակությունը, զիւտելիքները մշակելու նախաձեռնությունը ողակալին հավաքություններից և կոլեկտիվից գուրս, զպրոցում, տանը, իրենց բակում:

ԿԵՆՅԱՊԻՍԻ ՏԵԽ ԿՈՒՑԵԽԱ ՈՂԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

ՄԵՆՔ տալիս ենք այսպիսի որինակ՝

ԱՄՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

¶ ¶ 45-րդ կոլեկտիվի միջին ողակի նոյնմեր ամսվա:

Բ"նչ աօխատանի պիտի կատարվի	ԱՌԵՆ և հանձնարար- ված	Բ"նչպիս և կա- տարված (ողակի կոլեկտիվ գնա- հատականը)
1. ԿՈԼԵԿՏԻՎԻ ԱՌԱՋԱԴՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ		
ա) Պատրաստել մանկական դրագա- րանը զարգարելու լազունքներ, մասնա- կից անելով չկազմակերպվածներին, նկատի առնելով Հոկտեմբերի առաջիկա 11-րդ տարեկարձը:	Անտոնյանին և Գեոր- գյանին	
բ) Կազմակերպել ատարալցիոն կոլ- եկամիկ առավտայան համարույթում (կարթ, այիկոնորինաց և այլն):	Միքայելանին, Զաքա- րյանին և Միքոյանին	
գ) Կոլեկտիվի հերթական ողակ 1/XI և 15/XI միջև (2նուրի մաքրում և կար- գագահության հետեւը):	1/XI Ռանջանյան 3/XI Մանուկյան 5/XI Գեորգոսյան 7/XI Թումանյան 10/XI Միքոյան 12/XI Այվազյան 15/XI Մելքոնյան	
2. ՈՒՄՐԻՇ ԱՃԽԱՌԱՆՔ		
ա) ռշարժակումը կազմակերպել պիտո- նիներն ըի տներում յեղած բաղրա՞ջների և միջամտների վրա (իրքի կրկնություն բանգորական հանրակացարանի առա- ջին հարկի վրա նույնախիսի և հարձա- կումն կատարելու համար):	Բոլոր ողակներին 1/XI մինչև 10/XI աշխատանքը նախապատրաստելը հանձ- նարարել ողակալաբներն և յավագյան Հակոբին և Դադարյան Ազիկին	

բ) Առվորել հոկեյ խաղալը (մարտացանձնում):

չ) Ասաղձագործության առվորել (կատարել այն բոլորն, ինչ վար ըստ ձրագրի գերաբերում և մեր հասակին):

զ) Առվորել «Քմբեահամը» յիրակը:

է) Ջրաղվել «պինաերական զիկառության խաղով»:

Աղակային հավաքույթներից հերից հետո Առվորեցնում և վարդանը:

Բոլոր ողակային հավաքույթներում Առվորեցնում և Նինել Ղազարյանը:

Յուրաքանչյուր ողակային հավաքույթներում, վերցնելով Պիոների կանչից Խաղն անցկացնելն հանձնաբարպարվում և կերպին:

Յուրաքանչյուր ողակային հավաքույթներում, վերցնելով Պիոների կանչից Խաղն անցկացնելն հանձնաբարպարվում և կերպին:

Այս տիպի կառուցված պլանն առենից լավ և զրել ողակի հաշակատրի մեջ: Այս յիրեք սյունակից ավելի՝ «աշխատանքի անունը» առւմ և հանձնաբարված» և «ինչպես և կատարված» հարկավոր չեւունեալ, վորովհետև նույնիսկ ալսափսի հասարակ պլան կազմեն առաջին պահ ընդդիմազրության հնանդիպի պիոներների կողմից: Այդ միանգամայն բնական և, վորովհետև պիոները ձանձրանում և դպրոցում զրելուց, իսկ նրան ստիպում են զրել կոլլեկտիվում ևս Սակայն, յեթե դուք կպատահեք սիոներների կողմից նման ընդդիմազրության կամ պլան զրելու ցանկության բացակայության, զիջեցեք նրանց, թող ողակը մի յիրկու ամիս առանց պլանի աշխատի, և յերբ պարզ կերևս, վոր աշխատանքը կաղում և, լավ չի զնում, հավաքեցեք ողակը և տղաների հետ խոսնեցեք այն մասին, թե ինչպես պետք է աշխատանքն ավելի կազմակերպված դարձնել և այն ժամանակ նրանց մղեցեք դեպի ողակի ծրագիր կազմելու միտքը:

Ողակի աշխատանքի մասին խոսելիս չպետք է լուսթյան մատնել աշխատանքի տեղի խնդիրը:

Վերտեղ պետք է ընթանա ողակի աշխատանքը:

Մեզանում հաճախ կոլվարներն աշխատում են կոլլեկտիվի աշխատանքը հիմնականում վերածել ողակների հավաքույթների և կոլլեկտիվի խորհրդի նիստերի: Այս յիրելութի հետ ժամանակ և պայքար սկսել: Ինչու հավաքել ողակի հավաքույթ, յեթե աշխատանքը կարող են կատարել 2—3 պիոներ: Բայց չե՛ վոր մեղանում հավաքվում

հն այնպիսի հավաքույթներ,ուր 2—3 պիոներ աշխատում են, իսկ մնացածներն անգործությունից ակսում են չարություն անել, իսկ կուժարը ման և գալիս ու ջղայնանում է՝ չիմանալով, թե ինչպես լոեցնել շարություն անող յերեխաներին: Մի շարք զործեր կարելի յե կատարել վոչ թի ամբողջ ողակով, այլ 2—4 մարդուց բաղկացած խմբակներով, և այն ել վոչ թե անպայման կողմեկտիվում, այլ զորեւ պիոների բնակարանում, վորը կրաքարացնի ջոկատի հեղինակությունը ծնողների աչքում, վորովճառեան նրանք իրենց սեփական աշքերով կտեսնեն իրենց յերեխաների կոնկրետ, ոգտակար զործունեյությունը:

Աղակի եավաբույթների մասին

Աղակի հավաքույթները պետք և վորքան կարելի յե բազմազան լինեն և հետաքրքիր և վոչ ավելի, քան շարաթը յերկու անգամ: Պետք և վոր ողակի հավաքույթը պիոներներին համախմբի, նրանց աշխատելու խթան լինի: Հանձնարարում ենք ողակի հավաքույթը կառուցելու և անցկացնելու պլանը շարունակ փոփոխել, որինակ՝ փոխեփոխ կիրառելով հավաքույթի հետեւյալ ձեռքը՝ նախակալին նավահույր, յերր ողակը վերցնում և վորեն թեմա, յենթագրենք, ֆիզկուլտուրան և ողակի ամբողջ հավաքույթը դրան են նվիրում: Հավաքույթն սկսում են ձևավոր քայլերթից, բուրդեր են կազմում, զրույց են անում խորհրդային ֆիզկուլտուրայի մասին, սովորում են ֆիզկուլտուրային մարզայինական ամրողյ հավաքույթը նվիրված և ֆիզկուլտուրայի գաղափարին: հատուկ նօանակուրյուն ունեցող նավահույր, յերբ ողակը յերթ և կազմակերպում, զահուկային (լոյկհայ) յելույթ, «հարձակում ցեմիք վրա» և այլն: խտոն ծրագրով նավահույր, այդպիսի հավաքույթն սկսում են, յենթագրենք, շարքից, հետո վորեւ աշխատանք, ֆիզկուլտ, խաղեր, յերգ և վերջացնում են շարքով: նավահույր ողակի ընկերույթնեն ամերացնելու նամար, այդ հավաքույթը կարող է տեղի ունենալ վորեւ պիոների բնակարանում: Այդպիսի հավաքույթները կարելի յե հավաքել ձերթով յուրաքանչյուր պիոների բնակարանում:

Աղակավարի պարականություններ

Աղակի ամբողջ աշխատանքի մեջ ողակավարը հանդիսանում է կազմակերպիչ և ղեկավար: Նա յերբեք չպետք ամեն ինչ ինքն անի՞ գործիքներ, նյութեր, ղեկավար և այլն փնտուի: Նա այդ հանձնարարում և առանձին պիոներների, իրեն թողնելով ամենակարենոր աշխատանքը, ինչպես, որինակ՝ ողակի հավաքույթներն անցկացնելն և, դրանց նախապատրաստումն և, առանձին պիոներների հանձնարարված աշխատանքը կատարելուն հետեւյն ու ոգնելն եւ:

Աղակավարն աշխատում է, վոր իր բոլոր պիոներներն աշխատանք ունենան, իսկ վորեն պիոների կողմից դեպի աշխատանքը վատվերաբերմանք նկատելիս հանձնում և այդ ամբողջ ողակի զիտությանը: Կազմակերպիչ լինելու կարողությամբ ոժաված պիտի լինեն բոլոր պիոներները, բայց, այնուամենայնիվ, մենք չենք հանձնարարում դրա համար և ամսից ավելի հաճախ ողակավար փոխել:

Հաշվառում ողակում

Մրագրի մեջ մենք հայտարարել ենք առանձին ոլունակ այն մասին, թե «ինչպես և կատարված աշխատանքը», վորը ողակի ամենուրա հաշվառման հիմքն և կազմում և լրացվում և ընթացիկ ամսվավերջին հավաքություն, չերք խմբակը կոլեկտիվ կերպով զնահատական և տալիս լուրաքանչյուր հանձնարարաված աշխատանքի: Այսպես և կատարվում յուրաքանչյուր պիոների և ամբողջ ողակի ամենորդա աշխատանքի հաշվառումը:

Բացի այդ՝ տարին մի անգամ տարեկան ստուգատեսի ժամանակ ողակը պիտի կատարի հիմնական հաշվառում իր աշխատանքի և այն բոլորի, ինչ վոր այդ տարվա ընթացքում ձեռք և բերել լուրաքանչյուր առանձին պիոներ:

Այդպիսի տարեկան ստուգատես անցկացնելու կարգի մասին մենք կխոսենք մի փոքր ցածում:

Նվաճութեարի հաշվառման համար մեծ հաջողությամբ կարելի է ողակների միջև մրցումներ կազմակերպիչ մի շաբթ գործերի շուրջը:

Մի մոռանաք նաև հուշատեսրերի մասին: Հուշատեսրն ավելի ևս գործնական և չափազանց անհրաժեշտ կդառնա, յերբ դուք գրի կառնեք նաև աշխատանքի պլանը: Հուշատեսր պահել պիտի կարողանանք բոլոր պիոներները, բայց, այնուամենայնիվ, մենք խորհուրդ չենք տալիս տղաներին ստիպել հուշատեսրում գրելու, վորովհետեւ արդպիսի պիոներները կամ վոչինչ չեն գրի, կթողնեն վորեն որ չլրացրած, կամ այնպիս կգրին, վոր նրանց գրածից քիչ ողուտ կլինի:

2. ԱՄԲՈՂՋ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ինչպես բոլոր վերոհիշյալից լեռեւմ և արդեն, պիոներների աշխատանքի կենտրոնն անցնում և ողակին: Բայց դեռ շատ կտրեռ գործեր են մեռում նաև ամբողջ կոլեկտիվին:

Առանձին ուշագրություն պիտք և նպիրել:

Ընդհանուր հավաքույթներին

Կոլվարը, ազատվելով մեծ լերեքամսյա պլաններ գրելուց, պետք է անպատճառ կազմի մոռակա ամսի ընդհանուր հավաքույթների պլանը:

Այդ հնարավորություն կտա նախորոք հավաքույթի համար սովորել նոր չերգ, խաղ, ոգնության կանչել պիտինիստի, ֆիզկուլտուրնիկի: Յեթե ընդհանուր հավաքույթը լավ պատրաստված, ուրեմն և հետաքրքիր լինի, կորլարն ել չի վշտանա, վոր պիոներները լավ չեն հաճախում կոլլեկտիվի հավաքույթները:

Կոլլեկտիվի հավաքույթները, ինչպես և ողակինը, չպետք է կտառուցված լինեն ըստ շաբանի: այդ հավաքույթները պետք է ամեն կերպ բաղմագան դարձնեն:

Այժողը կոլլեկտիվի հավաքույթները, նոր սիստեմը մտցնելիս, պետք է զանան, մի կողմից, ողակների գործնական աշխատանիքի սուզման վայր, իսկ մյուս կողմից՝ բոլոր տղաների համախմբման, ամբողջ կոլլեկտիվի նամար ընդհանուր աշխատանիքի խնդիրների մեկնության վայր:

Սուսակումը կարող է ստացվել նրանով, վոր ողակները ցուց կտան, թե ինչ են նրանք իմանում կոլլեկտիվ կերպով կատարել (որինակ՝ մարզանքի, աշխատանքի, խաղերի, չերգերի և այլն առապարհուում) և կատամեն՝ ուր և ինչպես են նրանք աշխատում ընդհանուրի ոգուին, ինչներն են դժվարանում և այլն:

Իսկ համախմբվածությունն ստացվում է նրանով, վոր հավաքույթում պետք է լինի վորեն կոլլեկտիվ աշխատանք՝ խաղ, զրուսանք, քայլերթ, ինչպես և զրույց-պատմվածք, վորը կարողանար գրավել տղաներին:

H38984 Խուսափեցք ընդհանուր հավաքույթներում չոր քաղաքական զրույցներից, ավելի լավ և տալ հրատապ խնդիրների շուրջը քաղին-ֆորմացիա կենացնի, գունագեղ ձեւերով: Աղողիսի աշխատանքների որինակներ մենք բերում ենք գործերի ցանկում: Հրավիրեցեք կոլլեկտիվի զրույցներ անցկացնելու համար, ինչպես և բոլոր մյուս աշխատանքների համար ինժեներներ, տեխնիկներ, դիրեկտորին, գլուզատունաեսին, բժշկին, թող նրանք պատմեն զիտության և տեխնիկացի նորությունների մասին, այն մասին, թե ինչպես են ուսցիոնալացվում ձեռնարկությունները, թե ինչու 15-րդ կուսամակումարն արտահայտվել և հոգուտ կոլտնտեսությունների ուժեղ շինարարության և այլն: Այնպիսի մի ցավ ունեն շատ կոլլեկտիվներ, վոր թագվում են իրենց աշխատանքի մեջ և ել վաշվորի հետ չեն շփվում, նստում են իրենց շենքում, ինչպես խխունջն իր պատյանում: Հետեանքն այն և լինում, վոր զանազան կոլլեկտիվների պիոներների ընկերական կապը բացակայում է: Ել վճրտեղից ինտերնացիոնալիզմ, վոր նույնիսկ իրենց Խարերգային Միության մեջ պիոներները հաճախ չեն կազմում միասնական կոմմունիստական մի ընտանիք: Կոլլարները բոլոր միջոցները պետք է ձեռք առնեն, վորպեսզի մի կոլլեկտիվի պիոներները շփվեն մլուսների հետ, կազմակերպելով միասեղ հավաքույթներ, խաղեր, ա-

սավոտլան հավաքութիւներ, ընկերական յերեկութիւներ, միացյալ ըս-
դեներ և այլն:

Կոլեկտիվի ներին կյանքի կողմակերպությունը

Յուրաքանչյուր կոլեկտիվ պետք և աշխատի ձեռք բերել մի աշ-
խատանքի սենյակ կամ զոնե մի աշխատանքի սեղան: Շատ կոլեկ-
տիվներ, հնարավորություն չունենալով ինքնուրույն կերպով աշխա-
տանքի սենյակ կազմակերպելու, ողտագործում են իրենց աշխատան-
քային և տեխնիկական գործունելութիւնն համար ֆարզործուսի արհես-
տանցները, դպրոցները և յերեմն նույնիսկ արտադրությունները: Այս
պիսի կոլեկտիվներից պետք և որինակ վերցնել:

Բայց մեր ցավը վոչ այնքան այն է, վոր մեզ ջոկատի աշխա-
տանքի համար քիչ միջոցներ են տալիս, վոր մեր շենքերը վատ են և
այլն, այլ գլխավորապես այն, վոր շատ անփութ ենք, աղայաբար ենք
վերաբերգում կոլեկտիվի տնտեսությանը: Պետք է, վոր պիոներները
թանգ զնանատեն ամեն մի միախ, թիվի կտոր, տախտակի կտոր: Անտըն-
տեսավարությունը բոլոր կոլեկտիվների ամենամեծ չարիքն է: Կասկած
չկա, վոր յեթե մենք ափելի խնայող և ճշտապահ լինելինք, պիոներա-
կան կոլեկտիվների զգալի մի մասն արդեն այժմ վատ աշխատանքի
սենյակներ, վատ կահավորված ակումբներ չեյին ունենա:

Մի այսպիսի գեղք և պատահում: Մի լավ կոմյերիտական կազ-
մում և մի կոլեկտիվ, հաջողում և կոլեկտիվի համար յերեք սենյակ
ձեռք բերել, գործարանի վարչությունը կահավորում և այդ սենյակ-
ները: Սակայն շուտով այդ կոմյերիտականը բանակ և գնում, գալիս
և մի նոր կոլվար, վորի ժամանակ աշխատանքը լավ չի գնում, կոլեկ-
տիվի ակումբում հետզհետեւ ջարգում են կահավարասիքը, ապակիները:
Գործարանի վարչությունն այդ բանը տեսնելով՝ կոլեկտիվից շենքը
վերցնում և և տալիս և մանկապարտեզդի: Յեկ կոլեկտիվն այժմ շենք
չունի: Իսկ մեզավորն ով և այդտեղու իրենք պիոներները և նրանց
գլուխ անցած կոլվարը: Սակայն կոլվարն ինքը վոչինչ չի անում, հար-
կավոր և կոլեկտիվի տնտեսության ամբողջ վերահսկողությունը հանձ-
նել պիոներներից մեկին, վորի վրա պետք են գնել կոլեկտիվի պարե-
տի և տնտեսության վարչի պարտականությունները: Այդ պիոների
պարտականությունն է հետեւ կոլեկտիվի ինվենտարին, այն լրացնե-
լուն, հոգ տանել ինվենտարն իր ժամանակին նորոգելու, հսկել կոլեկտիվի
վի շենքը պահպանելուն, կոլեկտիվի ամեն տեսակ նյութերն ու պատկա-
նելիքները հատուկ պահպանում պահելուն: Պարետին ոգնելու համար
կոլեկտիվի ամեն որքա աշխատանքի ընթացքում ջոկվում և մի կոլեկ-
տիվի հերթապահ, միջին և ավագ ողակների պիոներներից՝ հերթով:
Կոլեկտիվի հերթապահնը մաքրում է կոլեկտիվի ակումբը, հետեւմ և

Դարդու կանոնին և ավագ որվա պարագմունքի կարգը ճշտությամբ լատարելուն:

Աշխատանքի սենյակում պետք է հատկապես ջոկվի մի պիռներ, վորը կլինի աշխատանքի սենյակի կամ աշխատանքի սեղանի վարիչ՝ երա պարտքն և հոգ տանել զործիքների մասին, այդ զործիքները ժամանակին նորոգելու մասին, այն մասին, թե ել վորտեղից զործիքներ պետք են ճարել աշխատանքի սենյակի համար և կոլեկտիվի անտեսությունը պահպանելու հետ կառված ուրիշ աշխատանք և:

ԵԲԲԱՍՊԱՍԱՎՈՐՈՒՄԸ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ

Բայց չե՞ վոր հեղափոխական տօներից և քաղաքական կամպանիաներից բացի զործերի ցանկը հաշվի չի առնում մի շարք զործեր կոլեկտիվի ինքնասսպասավորմանը վերաբերյալ, ինչպես, որինակ, կուլյեկտիվի ակումբի կահավորումը, լագերին պատրաստվելը, ակումբում հերթապահություն անելը և այլն:

Մեր խորհուրդն այս և թող ամեն ամիս կոլեկտիվի խորհրդի նախագահը կամ ինքը կուլյարը հաշվի առնի կոլեկտիվի ինքնասսպասավորման բոլոր կարիքները ամրող այդ ամսվա ընթացքում, և թող ինքը բաժնի այդ աշխատանքը, զեկուցելով այդ մասին կոլեկտիվի խորհրդին և ապա բնդհանուր հավաքույթում,—թե վոր ողակը և պիռները ինչ աշխատանք ունեն կատարելու կոլեկտիվի ինքնասսպասավորման գործում:

Այդ ընդհանուր կոլեկտիվային առաջողությունների կտառարումը բոլոր ողակների և պիռներների համար պարագիր և:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍԻՄՎՈԼԻԿԱՅԻ ՅԵՎ ԱՍՏՐԻՖՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պետք է լուրաքանչյուր պիռների սովորեցնել վոչ միայն այն, ինչ վոր միայն ինքն և ցանկանում, այլև այն, վոր նա պետք է կատարի հանրային ողտի համար: Պետք է նա կարողանա հարզել կոլեկտիվի կարգն ու սովորությունները, պետք է կարողանա յենթարկել անձնական պահանջները կոլեկտիվի խնդիրներին: Պիռներին պետք է սովորեցնել ճշտապահության, արագ ճշտակատարության: Կոլեկտիվի և ողակի հավաքույթները պետք է սկսել ճիշտ նշանակված ժամանակին: Տղաներին այդ տեսակենտից վարժեցնելու համար կարելի լի, որինակ, հավաքույթի ժամանակ նշանակել վոչ թե ժամը 1.ը, այլ 10, 15, 10, 23 և այլն և այլն, վոր անշուշտ պիռներներին ճշտապահություն կտորեցնի: Ինչ գնով ել ուզում և լինի, պետք է վերջապես պիռներներին սովորեցնել փողկապներ կրելը, մանավանդ յերբ նրանք գալիս են կոլեկտիվի պարագմունքին:

Պետք և հետեւ, վորպեսզի պիտուելներն իրար վողջունեն, վողջույն շափող առանձին պիտուելների հարցը մացնել կոլեկտիվի խորհուրդը և նույնիսկ զնել ընդհանուր հավաքույթներին։ Ինքը կոլվարը ևս անպայման պետք և փողկապով ման գա և վոչփոքի բարեկիս ձեւը չտու։

Կոլեկտիվի գրոշակը, ինչպես և ողակի գրոշակները, պետք է իրենց հատկացրած առանձին տեղն ունենան։ Կոլեկտիվի խորհուրդը մի գրոշակակիր և ջոկում և նրա յերկու ընթերակա, վորոնց պարտականությունն և հետեւ, վոր գրոշակին վնաս չհասնի, վոր այն ժամանակին նորոգիր. բացի այդ պիտուելները, կոլվարն ու նրա ոգնականը վշշվոք գրոշակին մոտ չի թողնվում։ Յեթե կոլեկտիվը գնալու լեցույցի կամ վորեւ զորահանդեսի, հավաքույթի, ժողովի, իր հետ վերըցնում և նաև գրոշակը, այն պայմանով, վոր գրոշակը զուրու հանելը կատարվի սահմանված կանոններով, կոլեկտիվի ամբողջ շարքի առաջնական պարը կանգնած պետք և լինի զբան հրահանգի համաձայն։

Ի՞ՆՉ Ե ՊԱՇԱՆՁՎՈՒՄ ԿՈԼՎԱՐԻՑ

Գլխավորն այն է, վոր կոլվարը կարողանա ուղղել պիտուելների շահերն ու ինքնազործունելյարյունը մեզ աներամեւս ուղղարյամբ՝ զեսպի հասարակական նպատակներ, կոլվարը պետք է կարողանա պիտուելի փախարեն շանել այն, ինչ վոր պիտուելներն իրենք կարող են անել. նա պետք է կարողանա առանձին մոտեցում ունենալ ամենից ավելի անկարգապահ պիտուելներին, ուստամբասիրել երանց յել իր ազգացուրյան տակ առնել. նա պետք է կարողանա աշխատանք կինդանի, աշխատ յել նիստերին դարձնել։ Իներ կոլվարը վոչ մի դեպքում չափելի և լաց լինի կոմ իրը կախվի։

Յեթե կոլվարն ուղում և դաստիարակել կուլտուրական, բանվոր դասակարգին նվիրված մարդիկ, ապա պետք և միշտ հիշի, վոր դաստիարակության ամենավայր միջոցներն ինչ հանդիմանությունը, նկատողությունը և հնացածումը, իսկ ամենալավը հն պիտուելների իրենց կոլեկտիվ ներգործությունն իրենց ընկերների վրա և իրեն կոլվարի որինակելիությունը։

Կոլվարը պետք և միշտ նկատի ունենա, վոր հաճախ պիտուելներները կազմակերպությունից զուրու գալուց հետո իրենց պիտուելական դեմքը կորցնում են հենց նրա համար, վոր նրանք խորը դաստիարակված չեն, վոր նրանք հաճախ հանձինս կոլվարի տեսնում են կեղծավորություն, խոսքը և զործը առբարպելու որինակ։ Կոլվարն առում և ամբ ծխիր, վորովհետև վնաս ե», իսկ ինքը ծխում ե։ Առում և գալարդական յեղիր, ճշտապահ յեղիր», իսկ ինքն անկարգապահ ու անճը-

տարան և լինում: Այս բոլորը խորք կնիք և գնում պիոների բնակուուրյան վրա, յեթ նա կյանք դաւրս զարով՝ իր մի փոքր առաջիկ դեկափարի դիրքն և բանում և նույնպես բոլորին սովորեցնում և զանազան առաքինություններ, խել ինքը նրանցից հեռու յե, ոկում և ծիսել, հաւ-հողի և պիոներներին անվայիկ ուրիշ վարմունքներ կատարել:

Առա այն հիմնական պահանջները, վոր մենք պետք և իրար ներկայացնենք, իրեն պատանեկական կոմմունիստական շարժման դեկադարներ:

Կոլեկտիվի ամբողջ ներքին աշխատանքը կուվարը պետք և դնի իր ողնականի, ողակավարների և պիոներների իրենց ուսերին: Խել ինքը պետք և նրանց ոգնի աշխատել, հարկավոր բովելին այդ աշխատանքին պետք և ուղղություն տա, պետք և գործարանի հասարակության կարծիքը կազմակերպի հոգուտ կոլեկտիվի թե կենդանի ուժեւոի, թե միջոցների, թե գործիքների և նյութերի տեսակետից: Լավ կոլվարը նա յե, ով վոր կկարողանա՝ կոլեկտիվին ողնության կանչել հասարակական և կուլտուրական ուժերը:

Ցուրաքանչյուր կոլվար անպայման պետք և ունենա պիոներների մասին ունեցած զիտողությունների հուշատեր: Միայն տղաների վարմունքի ուշադիր ուսումնասիրությունն և ապահովում պետք լեզած մոտեցումը դեպի պիոներներ, ուրեմն յեթ աշխատանքի հաջողաբերյուն:

Կոլեկտիվի խօսեուցք

Կոլեկտիվի խորհուրդն ահագին ժամանակ և խում պիոներներից: Պետք և այդ խորհուրդն ազատել ավելորդ խոսակցություններից: Հանձնարարում ենք կոլեկտիվի խորհրդում չհասատել ողակների ծրագրերը. թաղ ողակներն ավելի մեծ ինքնուրույնությունն զգան: Կոլեկտիվի խորհուրդը կարող և ամիսը կամ յերկու ամիսը մի անգամ սառցել ողակի աշխատանքը այն հաշվով, վոր հաշվի առնվի, թե ինչպես են կատարված կոլեկտիվի առաջադրությունները. կարողանում և արդյոք ողակն իր ուժերի համեմատ ծրագրել աշխատանքը, բնչպին և իր ամբողջ պլանը կատարում. միաժամանակ կոլեկտիվի խորհուրդն ողակին ցուցմունքներ և տալիս, թե ինչպես պետք և հետապայում ողակը կառուցի իր աշխատանքը:

Կոլեկտիվի խորհրդի պարտականությունների թվին և պատկանում հետեւալը՝ ընդհանուր կոլեկտիվալին աշխատանքների մատնանշում, ընդհանուր կոլեկտիվալին առաջադրությունների բաշխումն ըստ ողակների, սառւզումն այն բանի, թե ինչպես են ողակները կատարում կոլեկտիվի առաջադրությունները, առանձին պիոներների վարմունքի ներկայալ նարգերի հնարյալն, աշխատանքի սենյակի, կոլեկտիվի ակումբի վարիչների, խմբկոլի նախագահի և կոլեկտիվի աշխատանքի

այս կամ այն ճշուդի ուրիշ զեկավարների աշխատանքի հաշվետվությունը, կողեկտիվի խորհուրդը վարում և ինքը կորվարը կամ նրա ոգնականը:

Միքանի կոլեկտիվներում կոլեկտիվի խորհրդի մի մասը միշտ գործնական պարտավունքների՝ խաղերի, չերգերի և այլն համար և ջոկվում: Այդ բանը խորհուրդ ենք ապահովարել բոլոր կոլեկտիվներին, վորովհետև մի կողմից ավելի կենդանանա կոլեկտիվի խորհրդի աշխատանքը, իսկ մյուս կողմից զրանով մենք ավելի կենդանություն կմացնենք ողակների աշխատանքի մեջ, վորովհետև կոլեկտիվի խորհրդի անգամները կփոխադրեն իրենց ողակները յերգեր խաղեր և կոլեկտիվի խորհրդում ձեռք բերած ուրիշ զգարճություններ:

Հաշվառման չեվ տարեկան սուզատեսի մասին

Հազվագյուտ գեղքերում միայն կոլվարնուշագրություն և գարձրնում հաշվառմանը: Իսկ առանց լավ հաշվառման չկա լավ աշխատանք, չկա և չի կարող լինել լավ գաստիարակություն: Պետք է, քանի հետքը թարմ է, հենց նոր կատարած աշխատանքի տպավորության ներքո հավաքել կոլեկտիվի հավաքությ և այնտեղ քննել հանրագումարը: Կարելի լի վստահ կերպով ասել, վոր այդ հավաքույթը, յեթե նա ժամանակին և հրավիրված, աշխուժ կանցնի, մեծ վիճարանություններ և հենց նոր կատարած աշխատանքի զրական և բացասական կողմերի զործնական քննագագառություն կառաջացնի:

Իրեւ հաշվառման ձև կոլեկտիվում հանձնարարությ հենք կազմակերպել ժամանակ տա ժամանակ մրցությունը հետեւալ թեմաներից՝ հասարակական աշխատառների ամենալավ խմբի, աղտոտների ողակի, աշխատավորների ողակի և այլն: Շատ կոլեկտիվներ մեծ հաջողությամբ կազմակերպում են ցուցահանդեսներ, մրցությունը: Մրցությունի չափազանց տարվել պետք չե, վորովհետև այդ գեպքում մրցությունը նկատմամբ լիդած հետաքրքրությունն իջնում է, և նրանք որյի աշխատանքը կենցանի և հետաքրքրի ձև չեն հանդիսանում:

Կոլեկտիվի նվաճումների ստուգման լավագույն վայրը հանդիսանում լազերը: Լազերային լիանքում՝ գործնականի մեջ հնարագոր և գառնում կիրառել այն բոլորը, ինչ վոր պիոներները ձմեռները սովորել են կատարել լազերում ամենից լավ կարելի յի սառեցել և ամրացնել յերեխաների մեջ յեղած ընկերականությունը: Բայց այդ մասին կարելի լի ցուցմունքներ ստանալ մի շաբք գրքերում, վորը և ձեզ հանձնարարությունը:

Տարին մի անգամ, մոտավորապես մայիսի 1-ին մենք հանձնարարություն ենք յուրաքանչյուր կոլեկտիվին կատարել իր տարեկան աշխատանքի ստուգատեսն սկսեցեք ողակից թող ողակը:

միքանի հավաքույթներ ունենա՞ հատկապես նվիրված ստուգատեսի նախալաբարաստմանը իր հավաքույթներում ողակը կատարում և ամբողջ ողակի և առանձնապես լուրաքանչյուր պիոների կոլեկտիվ գնահատականը, ստուգում ե, թե ինչ և ինչպես և ողակն ու լուրաքանչյուր պիոներ կատարել ունակությունների և գիտելիքների ծրագրից, ինչպես և լուրաքանչյուր պիոներ կատարել իր կոչումը: Այդ գնահատականը ողակը տախու և նետելիյալ ուղղությամբ՝ պիոների կոլեկտիվությունն ու ընկերականությունը (կոլեկտիվ կերպով աշխատելու ընդունակությունը, զգայուն և քաղաքավարի վերաբերմունք դեպի ընկերներն ու շրջապատողները, նաև աշխատական ակտիվությունը, հասարակական աշխատանք կատարելու վորակը, վերաբերմունք դեպի իր պիոներական պատմիքը) նազողաւրյուններ դպրոցական սովորելու գծով. փոխնարարեցությունն ընտանիքի նետ:

Այդ հավաքույթներում պիոներները պետք ե ցուցաբերեն դեպի միմյանց ընկերականության և մաերմության մաքսիմումը, պետք ե հմտորեն, ընկերաբար ցույց տալ պիոներին նրա թույլ կողմները և կոլեկտիվ կերպով նշել այդպիսին ուղղելու միջոցները:

Ողակի նման ինքնահաշվառման և այլ աշխատանքները կարելի յեւ արտահայտել դիագրամմով, պլակատով, լուսաբանել պատի թերթում: Ողակը պետք ե ընդհանուր կոլեկտիվին ցուցահանդեսի համար պատրաստի գանագան տեսակ եքսպոնատներ, վորոնք զննելի կերպով բնութագրում են նրանց նվաճումները:

Ընդհանուր կոլեկտիվի մասշտաբով կարելի յեւ կազմակերպել հետեւյալը. ընդհանուր հավաքույթում լսել ողակների հաշվառումը նրանց տարեկան աշխատանքի մասին, կազմակերպել մորցում ողակների միջն. կազմակերպել ցուցահանդես, ընկերական ժողովի հավաքել ծնողներին և այդ ժողովում պատմել կոլեկտիվի աշխատանքի արդյունքների մասին, լսելով նրանց մանրամասն կարծիքը կոլեկտիվի մասին:

Կոլեկտիվներում ստուգատես կատարելուց հետո, որինակ, Միջազգային Պատանեկալան Շաբաթին կարելի յեւ աւսպիսի ստուգատեսներ կատարել արգելն ուայններում, շրջաններում, քաղաքներում և ալլի:

Մարդնական ստուգատեսի նպատակն ե ցույց տալ ուայննի կոլեկտիվների փորձն ու նվաճումները, միքանի լավագույն կոլեկտիվներ մատնանշել, վորոնց պետք և աշխատի հավասարվել ուայննի կազմակերպությունը մայոնում կատարվող ստուգատեսի համար կարող են կիրառվել նույն ձևերը, ինչ վար կոլեկտիվներում մրցումներ կոլեկտիվների միջն, ցուցահանդեսներ, ողակավարների, կոլվարների կոնֆերենցիաներ: Մայոնի ստուգատեսի հանրագումարը պետք ե արվի հնարավորին չափ հանդիսավոր կերպով, հատկապես պետք ե դրա համար գումարել պիոներների ուայնական հավաքույթ, այնտեղ պատմել

ստուգատեսի արդյունքների մասին: Լավագույն 5—10 կոլեկտիվի ողեաք և զորկե մրցանակ հատկացնել, որին ակ՝ զրքերի զրադարձն, պարբերական և այլն:

ԳԼՈՒԽ 4-ՐԴ

ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարկավո՞ր են արզու կողեւթիվում խմբակները

Այդ հորցը մնաց դեռ բոլորովին չլուծված: Ի՞նչպես վարդել ապա խմբակների հետ: Մեր նպատակն է, զոր հիմնական աշխատանքը տարվի ողակներում: Միքանի ընկերներ կասեն, թե պիտներները կունենան ալնպիսի պահանջներ, զոր ողակը բափարաբել չի կարող, զոր ողակի աշխատանքի ծրագրից զուրս են թուում, զոր առանձին պիտներները ծրագրով աշխատելիս, ինչպես արդեն ասցիցնք, առանձին համաքրքրություն ցույց կտան դեպի առանձին զորձեր:

Այդ ձիշու է, և հենց զրահամար ել մենք առաջարկում ենք զորձերի ցանկին և ունակությունների ծրագրին ավելացնել վարպետությունները:

Կ՞նյապես և պիտները վարպետություն-ստանում

Պիտներն ինքը, իր ցանկությամբ ընտրում եւ այն վարպետությունը, զոր նրան ամենից ավելի լի հետաքրքրում, զրահամար նա վերցնում է համապատասխան ծրագիրը և այն մշակում է: Յեթե կուլտիվում զանգեն միքանի պիտներներ, զորոնք ուզում են մի վարպետություն սովորել, ապա նրանցից արդեն կազմվում և մի փոքրիկ խմբակ: Խմբակն ինքն իրեն համար դեկավար, ձեռնարկ, նյուրեր, զործիքներ և ձեռք բերում, իսկ յիթե հարկավոր է, զիմում և կոլվարի ոգնության: Վարպետությունները մեզ հնարավորություն կաան զոչ միայն անհատական պահանջները բափարաբել, այլ յել դրսելուի պիտներների պրոֆեսիոնալ հակումները, զորը մեզ համար կհեշտացնի, լերը պիտները կազմակերպությունից զուրս կզա, նրան ոգնել ուզած, պրոֆեսիան զանելու: Մեծ հաջողությամբ զորկե մասնագիտություն կարող և մշակվել ամրոզջ ողակի կողմից:

Քըքի վերջում մենք տալիս ենք այդ վարպետությունների որինակներ, զօրանք այդ ձեռք ել կարող են հենց ջոկատում ոզտազործվել: Մոտիկ ապագայում լրացուցիչ կերպով կմշակվին 10—15 մասնագիտություն և կուղարկվեն կոլեկտիվներին:

ՄԱՍՆ II

ԳԼՈՒԽ Ի-ԻՆ

ԿՈՎՈՒԵԿԸՆԻ ՅԵՎ ԱՊՐՈՎԸՆԻ ԴԱՐՁԵՐԻ ԱՐՔՆԱԿԱՆԻ ՅՈՒՆԻ

1. ՀԱՍԱՐԱԿԱՆ-ՌԴՏԱԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ

«Յերեխաների իրավունքների յև օաների համար պայխարելու պրոցեսում, կռւսակցական, արհմիութենական և կռոպերատիվ կաղմակերպություններին ուժանդակելու պրոցեսում, պիտիներական կազմակերպությունը լավագույն կերպով կարողանանալ դաստիարակել պիտիներների մեջ աշխատանքային և կազմակերպչական ունակությունները։ Կարեռը միայն այն չե, վոր չերեխաները ձեռք բերեն վրուց գիտելիքներ և կարողություններ։ — ամենազլիսավորն այն ե, վոր պիտիներական կազմակերպությունը տար նրանց արտելային, կոռպերատիվ աշխատանքի և ճիշտ կազմակերպված հանգրաստի ունակություններ։ Կարեռն այն ե, վոր պիտիներները սովորեն իրենք իրենց առաջադրել հասարակական այնպիսի նպատակներ, վորոնց կարելի յե հասնել ընդհանուր ուժերով (հարկավոր են այս ինչ ուժերը, այսպիսի կարողություններ և այլն), առօրեն հաշվի առնել աշխատանքի արդուունքները (այսքան բան արված ե, արված ե լավ կամ վատ, յեթե վատ ե, զրա պատճառը, ինչ և մնում անելու և այլն), սովորեն աշխատել, ոգնելով մեկ մեկու (յերկուսով, յերեքով), կոլլեկտիվով (համախմբելով և կենարանացնելով ուժերը), սովորեն բաժանել իրար մեջ աշխատանքը թիենց ուժի յեվ կարողարյան համաձայն։

(Համբ Աւանդ Տ. բգ Համագումարի վորուստներից)

Հասարակական-ողբանակար աշխատանք շատ կա։ Նրանց մի մասը համապատասխանում է ողակների ուժերին, մյուսները պահանջում են ամբողջ կոլլեկտիվի ջանքերը։

Վատ կլինի, յեթե զուք վորեն հասարակական-ողբանակար աշխատանք կատարելուց հետո զրա վրա կանգ առնեք։ Հասարակական-ողբանակար աշխատանքը պետք է կատարել ամեն ժամանակ, սիստեմատիկ կերպով։ Չե վոր կան թերություններ, վորոնց ավագ ընկերները

չեն կարող հիմնել. պետք է ոգնել բանվորին, բատրակին, չքավոր զւուղացան, և բացի այդ ձեր վրա զրված է մեծ պարտականություն՝ պաշտպանությունը ցույց տալ և պահպանել յերեխաների իրավունքները: Աւստի չպետք է բերանը բանալ և ձեռները ծալած նստել. մենք ձեզ հետ աղաների տղա չենք, ուստի պետք է համառ, տոկուն կերպով աշխատել:

Սկզբի համար հանձնարարում ենք սկսել նրանից, ինչ վոր այստեղ բերում ենք: Այս աշխատանքների հախից զուք կարող էք զաւ: Այդ աշխատանքները հաջողվել են շատ ուրիշ կոլլեկախիմերի ևս մինչև ձեզ: Չեր կոլլեկտիվ ել փառձ ունի:

Ամբողջ կոլլեկտիվի ջանքերով՝

1. ՄՏԵՂԾԵԳԵԲ ՏՈՒՆ-ԿՈՄՄՈՒՆԱՅԻՑ, բնակարանային վարձակալական ընկ. Շենքում կամ ակումբին կից մանեկան սենյակ, կահավորեցիք անհրաժեշտ կահ-կարասիքով, զարգարեցնեք, զրեք ուղղիո, այդ աշխատանքին մասնակից զարձրիք ձեր բակի անկազմակերպ յերեխաներին:

Այդ սենյակին կից կազմակերպեցիք միքանի աշխատանքալին և տեխնիկական խմբակներ: Յեթե զուք պատրաստված եք, զեկավարներ ընտրեցնեք ձեր միջից: Յեթե վոչ աշխատեցնեք պատրաստվել կամ պատրաստված մարզիկ զանել ձեզ ծանոթ և հասարակայնորեն տրամադրությամբ բնակիչներից: Մի աշխատեք միանգամից սկսել բարդ և թանգ կահավորումից, սկսեցիք նրանից, ինչ վոր հաջողվում է զանել հենց ձեզ և ձեր բակի այն յերեխաներին, վորոնք հետաքրքրվել են ձեր սկսած զործով: Միայն թե մարզկանցից մի թագնվեք: Այն բոլորը, ինչ վոր զուք անում եք, պետք է իմանան բոլոր յերեխաներն ու նրանց ծնողները: Ակնհետք թեկուզ փոքրիկ զործից, թեկուզ միքանի յերգերից, խաղերից և հետզհետե անցեք ավելի մեծին: Այդ բանում ձեզ յերաշխիք կարող ել լինել ձեր աշխատելու ցանկությունը և այն փորձը, վոր զուք կատանաք աշխատելու:

2. Զեռվ գարեկեցեք ձեր զյուղական գարողի մանր նօրոգումներին: Ձեր զպրոցում, յենթաղրենք, փչացած աշակերտական սեղաններ կան-նորոգեցնեք այդ սեղանները: Ձեր պատուհանները, գոները սարքին չեն. Նորոգեցնեք: Դուք ձեր զպրոցում կդառնեք մի շարք մանր թերություններ, վորոնք առանձնապես մեծ ջանք չեն պահանջում, բայց վորոնց վերացնելը ձեր զպրոցն ավելի լավ, ավելի կողիկ կդարձնի: Այդ բոլոր աշխատանքն արեք անկազմակերպ յերեխաների հետ միասին: Ա-մեն մի գիտակից յերեխա կուգենա ոգտակար լինել: Տվեք նրանց այդ հնարավորությունը, մասնակից զարձրեք նրանց ձեր աշխատանքին, և նրանք կդառնան ձեր ընկերները:

3. Կրօնական տօնի որը կոլեկտիվը յերեխաների մասսայական

ՏԵՇ և կազմակերպել, բազմաթիվ անկազմակերպ յերեխաներ ևն լէսկեր և նույնիսկ մեծահասակներ Նրանք լեկեցի չեն գնացել, բայց հետաքրքրվել են յերեխաների տոնով, Ալդ տոնի ժամանակ անց են կացրի պիտիներին և զպրոցականների մարդանքներ, մասսայական յերեխայական խաղեր, խմբական յերգեր, բեմադրություններ: Ալդ բանը լեռնեխաններին կկտրի յեկեղեցուց և կհետաքրքրեցնի ձեր աշխատանորով: Դուք ել այդ արեք:

4. Անցյալ տարի շախսել վախսելի որը հեռավոր գյուղերից մենակում գյուղացիներն ալդ տոնին մասնակցության ցուց տվին, իրենց վասահցին: Պիոներական կոլլեկտորին ալդ բանը հաշվի առավ: Տգաները բժշկի ողնությամբ նկարեցին պյականներ, այնուհետ գրեցին, թե ինչ նիւֆանդրյուններ և առաջացնում շախսել-վախսելի ժամանակ իննօնխաղականումը, և ամբողջ գյուղում կախեցին: Այսպիսի մի հարց առաջարկիցին, թե ինչու մոլլա Մահմեդը և շայխանելի տերը յերբեք իրենց չեն վեասում, այլ աղքատ մարդկանց են վարձում, վորոնք և նրանց փոխարեն իրենց վեասում են, իսկ չքափորներին ստիպում են մասնակցել շախսել-վախսելին: Պիոներները բացատրեցին գյուղացիներին, վոր ալդ կատարվում է, վորպեսզի չքափորների կրոնական զգացմունքներն ամբանան, նրանք թուլանան և հնագանդ գառնան, վոր նրանց շահագործելը հեշտ լինի: Պիոներների ալր ագիտացիան գլուղացիների վրա մեծ ազդեցություն թողեց:

Կենարունից հեռու ընկած գյուղերում, հակառակ խորհրդաշին իշխանության արգելքին, դեռևս շախսել-վախսել են կատարում: Զեզ պետք և դրա զեմ պայքար մղել:

5. Ստեղծեցեք կոլեկտիվ փորձնական բանջարանոց: Գյուղինոր հըրգի առաջ հարցուցեք, ձեռք բերեք մի փոքր հողի կտոր և անցնեք աշխատանքի: Վերցրեք այն մշակույթը, վորը խորհրդային իշխանության կողմից ամենից ավելի յել խրախուսվում կարելի է վերցնել՝ թել, կանեփ կտմ բամբակ: Սակայն այդ պիտիմատիվ ձեռք մի արեքը Մի մոռանաք, վոր պիոներները պետք ե առաջավոր մարդիկ լինեն: Ամենից լավին գյուղատնտեսին հարցնել, թե ինչպես պետք և հողը պարարտացնել ինտերով պետք և հետեւ ցանքսին և հիվանդությունների գեն կավել: Զեր բանջարանոցը պետք և գյուղի համար ցուցադրական լինի: Դուք այնպես պիտի աշխատեք, վոր գյուղացիները ձեր աշխատանքով սովորեն և ձեր բանջարանոցին նայելով իրենց տնտեսությունը լավացնեն: Բանջարանոցում կատարվող աշխատանքը պարագաները ամբողջ կոլեկտիվի աշխատանքը: Իսկ բերքը համարելուց հետո վարձի ամբողջ վողը գործադրեցնեք կուտուրական աշխատանք տանելու յերեխաների մեջ և չքափոր չերեխաներին ոգնելու համար:

6. Գյուղում խոճիթ-ընթերցարան չկար: Համարյա վոչվոք լբա-

գիր՝ չեր կարգում, վորովհետեւ լրացիրը պետք եր ձեռք բերելու Գլուզացիները չգիտեյին, թե ինչ և կասարվում նրանց շուրջը, չզիտեյին խորհրդացին իշխանութիւնն մէծ ստեղծագործական աշխատանքի մասին, չզիտեյին, թե ինչպես են ուրիշ զլուզիրի զլուզացիներ միանալով կոլլեկտիվ անահուութիւններ կազմում և ինչպես զրանից հետո լավ են են ապրում. Նրանք գիրք չեցին կարգում, ապատ ժամանակն անցնում եր անողութ կերպով. Պիտինեները փորում են կայեցիտականների ոգիուրյանք խոնիք-բնիքեցարան ստեղծել, Գյուղխորհուրդը նրանց սպանեց շենք զմնելու, միջոցներ տվեց պլակատ, լրացիր և զիրք գնելու, պիտիներները զարգարեցին և կահավորեցին խրճիթ-ընթերցարանը, ուր այժմ զնում են բոլոր զլուզացիները: Հասկանալի յի, վոր զլուզացիները զուգում են արդարիսի պիտիներներին: Խսկ յիթե ձեզ մոտ խրճիթ-ընթերցարան կա, սակայն կեղտուա և սարքին չե, ձեր պարտականութիւններ այդ խոնիք-բնիքեցարանի կարգութիւնի վեճ զլուզացիներին գրավիլ բնիքեցարան, նրանց համար բարձր ընթերցանութիւնն կազմակերպել Դա մէծ զորձ կլինի:

7. Գյուղզացիները չեցին հասկանում, թե կոլլեկտիվ անտեսությունն ինչ սովուտ և տալիս զյուղացիներին, և թեաքա զյուղխորհուրդնուու կոմմիջիջը կորլուսահութիւններ ելին ստեղծում, բայց զյուղացիների մի մասը գեափ այդ կորլուսահութիւններն անբարյացակամ ելին վերաբերի վում: Տերաերն ու կուլակը զյուղացիներին տառը ելին. «Այդ կիշացնի ձեզ եւ, ձեր անտեսությունն եւ»: Պիտինեները զյուղանեխի յիլ ուսուցի ոգնուրյանք մի յեւեկլոյ անցիկացրին, ուր հրավիրեցին բոլոր զլուզացիներին, պիտիներներին պատվիրեցին, վոր յերեկութիւն զան անպայման իրենց հոր և մոր հոհու Յերեկութիւնը նրանք զրին զյուղատնտեսի 15 բոպե տեսող զեկուցումը կորլուսահութիւնների մասին, խսկ տապ զուրս ելին զալիս իրենք: Երանց բոլոր պլակատները, յերպերը, ժաքրիկ պիկսաներն այնպես ելին կազմված, վոր բացատրում ելին, թե կոլլեկտիվ տնտեսությունն ալիքի մեծ տան և տախ, բան նույն մեծուրյան տնհատական, առանձին տնտեսությունների մի խումբ, բացի ալդ զյուղացիութեանը հնարագորութիւնն և տալիս իր կուլտուրական զարգացման ինդրով զրազվել: Այդ յերեկութիւն այնպես ազգեց զյուղացիների վրա, վոր նրանք սկսացին մտնել կորլուսահութիւնների և արտելների մէջ:

